Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը դատավոր Գ. Խանդանյանի, քարտուղարությամբ Ս. Հարությունյանի, մասնակցությամբ հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Կ. Մեժլումյանի, պատասխանողի ներկայացուցիչ Գ. Թադևոսյանի դռնբաց դատական նիստում, Երևան քաղաքում, 2009թ. հունիսի 16-ին ուսումնասիրելով ԵԿԴ/0887/02/09 քաղ. գործի նյութերն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Շուշան Դոյդոյանի ընդդեմ «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Հարությունյանին՝ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ հարցը

Պ Ա Ր Զ Ե Ց

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Հարությունյանին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով:

16.06.2009թ. նախնական դատական նիստի ժամանակ պատասխանողի ներկայացուցիչ Գ. Թադևոսյանը հայտնեց , որ ՀՀ վարչական դատարանում քննվում է վարչական գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի՝ ՊՈԱԿ-ի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու որպես հետևանք տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասին, որն անմիջականորեն կապված է սույն քաղ գործի հետ, ուստի միջնորդեց կասեցնել գործի վարույթը մինչև ՀՀ վարչական դատարանի կողմից քննվող գործով վերջնական ակտ կայացնելը:

Հայցվոր « Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Կ. Մեժլումյանը առարկեց միջնորդության դեմ:

Դատարանը, քննարկելով միջնորդությունը, գտավ, որ այն հիմնավոր է, բխում է ՀՀ քաղ.դատ. օր.-ի 105 հոդվածի 1-ին կետի պահանջներից, ըստ որի դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե՝ անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղ. դատ. օր-ի 105 հոդվածի 1-ին մասով, 144 հոդվածներով, դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

ԵԿԴ/0887/02/09 քաղաքացիական գործի վարույթը ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Հարությունյանին վարչական պատասխանատվության՝ 50.000 ՀՀ դրամի չափով տուգանքի ենթարկելու պահանջի մասին՝ կասեցնել, մինչև ՀՀ վարչական դատարանի կողմից թիվ ՎԴ-1696/05/09 վարչական գործով վերջնական ակտ կայացնելը:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան գործին մասնակցող անձանց կողմից այն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Գ. ԽԱՆԴԱՆՅԱՆ